

նոնք սպառնացներ կուտան աւելի հաւատարմութեան եւ անձնուիրութեան հանդէպ Բ. Իւրան, քան քիւրդ եւ արաբ իսլամ ազգաբնակչութիւնը» : (Մուրղէ, էջ 268) :

Այս մէջըրեւումէն, ինչպէս նաեւ Հաֆըզ փաշայի մտադրութիւններէն կ'երեւի, որ հայերը մեծապէս թեքուած էին թրքական կառավարութեան կողմը : Բայց այդ խնդիրը թողնենք իր ժամանակին քննելու . ու շարունակենք հետեւիլ դէպքերուն, որոնք դահալիթօրէն կ'ընթանային :

* * *

Թրքական 80,000-նոց բանակը երկու տարի (1838-1839) ծանր նստաւ Քրդստանի կուրծքին, առանց վերջնականօրէն դայն կարենալ խեղդելու : Քրդական կուռոզ տարրերը լեռները ապաստանեցան . թրքական բանակը Բոսթանի եւ Հէքիարիի կողմերը չկրցաւ անցնիլ : Բոնի կերպով հաւաքուած քիւրդ զինուորները մէկ երկու ամիս մնալէն յետոյ, կը թողնէին թրքական բանակը եւ կը քաշուէին լեռները կամ կ'անցնէին սիւրիական սահմանը՝ Իբրահիմ փաշայի բանակին միանալու :

Թրքական գոռոզ հրամանատարը, Հաֆըզ փաշան, իր սիրազօրծութիւնները բաւական համարելով Քրդստանի մէջ, ու տեսնելով որ եղիպտական զօրքերը մշտական սպառնալիք էին Թուրքիոյ գոյութեան, ուղեց խիզախ հարուածով մը մեծ յաղթանակ մը տանիլ Իբրահիմ փաշայի դէմ, ու այդպիսով՝ տեսակ մը դիքտատոր դառնալ Թուրքիոյ : Եւ, հակառակ Մուրղէի տուած խորհուրդներուն, Հաֆըզ փաշա ամէն միջոցի դիմեց հրահրելու պատերազմը, ջանալով զինադադարի խախտումը վերադրել Իբրահիմ փաշային :

Թրքական բանակը Տիարբէքիւրէն, Ուրֆայէն եւ Մալաթիայէն կը կեդրոնանայ Բէրէճիք, ու ճակատ կը բռնէ Նէսիբի դէմ : Առաջին յարձակողականը տեղի կ'ունենայ Նէսիբիի վերայ : Եղիպտական բանակը, որուն միացած էին Թուրքիոյ դէմ եզոզ բոլոր անկանոն ուժերը, թուական դերազանցութիւն մ'ունէր :

Թրքական բանակի յարձակողականը ճախող անցաւ : Իբրահիմ փաշան ջախջախիչ հարուած հասցուց Հաֆըզ փաշայի բոլոր թեւերուն : Թրքական բանակը քայքայուեցաւ : Հա-

Փըզ փաշան իր սպայակոյտով անցաւ Մարաշ, ուրիչ ստիպուեցաւ փախչիլ, որովհետեւ Իբրահիմ փաշայի զօրքերը արագ յառաջխաղացումով գրաւեցին նաեւ Մարաշը :

Պատմութիւնը արդէն յայտնի է : Եղիպտական բանակները ոչ միայն տէր դարձան Սիւրիոյ, գրաւեցին Հալէպը, ցրուեցին Քըրդստանէն յառաջացող թրքական խոշոր զօրաբանակը, այլ եւ տիրապետեցին Կիլիկիոյ, հասնելով մինչեւ Գոնիա : Թուրքիան կը կործանուէր, եւ կը կործանուէր իսլամ ժողովուրդներու կողմէ :

Քիւրդիստանը թէեւ արիւնջուայ, բայց զիմադրութեան մէջ աննկուն, բախտաւոր հանդիստ մը կ'ունենար, տեսնելով թրքական բանակի խորտակումը : Թրքական ճարձատող շէնքը կը փլէր, ու փոքր Ասիոյ ժողովուրդները կ'ապրէին մեծ քաղաքական փոփոխութիւններու ճակատագրական վայրկեաններ, երբ... շահադէտ Եւրոպան եւ մասնաւորաբար Ռուսաստանը միջամտեցին Թուրք-եղիպտական պատերազմին, ու հարկադրեցին Իբրահիմ փաշան կասեցնելու իր յաղթական արշաւանքը :

Հիւանդ մարդը փրկուած էր :

Պարտադրուած զինադադարը անորոշ ժամանակուան մը համար էր : Այդ երկարատեւ զինադադարը տեւեց եօթը տարի, ու դարձաւ կայուն դրութիւն մը երկու կողմին համար : Սակայն, պոռթկացող արաբական հեղեղը այդ կայուն վիճակին մէջ տեղի տուաւ, կամաց կամաց սպառեցաւ, ու քաշուեցաւ իր հունին մէջ : Եօթը տարի յետոյ, թրքական ընկճուած բաժակը կենդանութիւն կը ստանար, ու հետզհետէ դարձեալ կ'երկարէր արաբական աշխարհին վրայ :

* * *

Քրդական զիմադրութիւնները 1835-էն մինչեւ 1840 թուականները, թէեւ ուշադրաւ ուժեղութիւն մ'ունէին, սակայն, անզօր դառնուեցան Հաֆըզ փաշայի դերազանց ուժերը պարտութեան մատնելու . որովհետեւ քրդական ապստամբութիւնները իրարմէ անջատ կը դարգանային, եւ քիւրդերուն կը պակսէր իրարու օգնելու ազգային զիտակցութիւնը : Զօրաւոր զրեթէ բոլոր ցեղերը թշնամի էին թրքական պետութեան եւ իրենց փաշայութեան սահ-